

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում
Նախագահ Արթուր Ջավադյան
2 դեկտեմբերի 2008թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ
ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄԱՍԻՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ԵՐԵՎԱՆ 2008

1. Ընդհանուր դրույթներ

Սույն կանոնակարգը սահմանում է արժեթղթերի հաշվարկային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) անդամության և անդամությունից զրկման, Համակարգի օպերատորի

կողմից արժեթղթերով գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ճշտման, դրանց արդյունքում փոխադարձ պարտավորությունների որոշման և հաշվանցման, արժեթղթերը հաշիվներում փոխանցման, վերջնահաշվարկի կատարման, վճարման ու վերջնահաշվարկի հարցերում կողմերի միջև որպես գործակալ հանդես գալու կարգերը, ինչպես նաև Համակարգի անդամի և նրանց հաճախորդների արժեթղթերի ու դրամական միջոցների առանձնացված պահպանմանն ուղղված միջոցառումները և Համակարգի օպերատորի փոխհարաբերությունները ՀՀ կենտրոնական բանկի, Հաշվարկային գործակալի, Բորսայի և Անդամների հետ:

1.1 Սույն կանոնակարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

- 1.1.1. **«արժեթղթերի հաշվարկային համակարգ կամ Համակարգ».** արժեթղթերի հաշվարկային համակարգը սույն կանոնակարգով սահմանված կարգով արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող վարչական, տեխնիկական և իրավական միջոցների ամբողջությունն է.
- 1.1.2. **«անձնական հաշիվ».** գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ), նրան պատկանող (նրա անվամբ գրանցված) արժեթղթերի և դրանցով կատարված գործառնությունների մասին ռեեստրում առկա տեղեկությունների ամբողջությունը.
- 1.1.3. **«առևտրային արգելադրում».** Օպերատորի կողմից իրականացվող գործառնություն, որի արդյունքում Բորսայում առևտուր իրականացնելու համար նախատեսված արժեթղթերի փոխանցումն արգելվում է որոշակի ժամանակահատվածում կամ մինչև այդ արժեթղթերով Բորսայում կնքված առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի կատարումը, որը հանգեցնում է այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը.
- 1.1.4. **«առևտրային արգելադրման դադարեցում».** Օպերատորի կողմից իրականացվող գործառնություն, որի արդյունքում Բորսայում առևտուր իրականացնելու համար նախատեսված և արգելադրված արժեթղթերը հանվում են արգելադրումից՝ առանց այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման կամ Բորսայում կնքված առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի կատարման հետևանքով այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման.
- 1.1.5. **«առևտրային օր».** աշխատանքային օր, որի ընթացքում Բորսայում իրականացվում է արժեթղթերի առևտուր.
- 1.1.6. **«առևտրային նստաշրջան»** առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում իրականացվում է արժեթղթերի բորսայական առևտուր.
- 1.1.7. **«տեխնիկական հաշիվ».** Օպերատորի մոտ իր անունով բացված հաշիվ, որը նախատեսված է Համակարգի տվյալ անդամի և/կամ նրա հաճախորդի արժեթղթերով տվյալ առևտրային օրվա առևտրային նստաշրջանում կնքված գործարքների արդյունքում գործարքի առարկա արժեթղթերի փոխանցման համար.
- 1.1.8. **«դրամի առևտրային հաշիվ».** ՀՀ կենտրոնական բանկում՝ Օպերատորի անունով բացված հաշիվ, որը նախատեսված է տվյալ առևտրային օրվա ընթացքում Համակարգի անդամի և/կամ նրա հաճախորդի այն դրամական միջոցների փոխանցման համար, որոնցով Համակարգի անդամի կողմից նախատեսվում է տվյալ առևտրային նստաշրջանում առևտուր իրականացնել.
- 1.1.9. **«սեփական դրամական միջոցների հաշիվ».** Հաշվարկային գործակալի մոտ Համակարգի անդամի անունով բացված դրամային հաշիվ, որտեղ հաշվառվում են Անդամի սեփական դրամական միջոցները.

- 1.1.10. **«հաճախորդի դրամական միջոցների հաշիվ».** Հաշվարկային գործակալի մոտ Անդամի անունով բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են Անդամի հաճախորդների դրամական միջոցները.
- 1.1.11. **«արժեթուրք».** այն արժեթղթերը, որոնց սեփականատերերի ռեեստրը վարվում է Օպերատորի կողմից և որոնք Բորսայի կանոններով սահմանված կարգով թույլատրված են առևտրի.
- 1.1.12. **«Բորսա».** «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերություն.
- 1.1.13. **«Համակարգի օպերատոր կամ Օպերատոր» -** «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն.
- 1.1.14. **«Անդամ».** Համակարգի անդամ
- 1.1.15. **«գործարքի կնքում».** առևտրային նստաշրջանի ընթացքում Անդամների միջև Բորսայի կանոններով սահմանված կարգով արժեթղթերի առուվաճառքի էական պայմանների վերաբերյալ համաձայնության կայացում.
- 1.1.16. **«նախնական դեպոզիտային առևտուր».** Բորսայում իրականացվող առևտուր, որի համար նախատեսված դրամական միջոցները փոխանցվում են դրամի առևտրային հաշվին, իսկ արժեթղթերը ենթարկվում են առևտրային արգելադրման, որից հետո Բորսայում կնքված գործարքների առնչությամբ Օպերատորի և Անդամների բոլոր գործողություններն ավարտվում են տվյալ առևտրային օրվա ընթացքում և գրանցվում անձնական հաշիվներում.
- 1.1.17. **«ռեեստրից քաղվածք».** Օպերատորի կողմից տրվող փաստաթուղթ, որը հավաստում է, որ դրանում նշված անձը թողարկողի որոշակի դասի և որոշակի քանակությամբ արժեթղթերի գրանցված սեփականատեր (անվանատեր) է՝ որոշակի ամսաթվի դրությամբ.
- 1.1.18. **«հաճախորդ».** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը բրոքերային ծառայությունների գործող պայմանագիր ունի Անդամի հետ.
- 1.1.19. **«Հաշվարկային գործակալ».** ՀՀ օրենսդրությամբ սահմանված բանկային գործունեության իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ, որի միջոցով իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկում դրամային իրավասու հաշիվներ չունեցող Անդամների՝ Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների հետ կապված դրամական միջոցների փոխանցումները՝ Անդամի և Հաշվարկային գործակալի միջև կնքված պայմանագրերին համապատասխան.
- 1.1.20. **«քլիրինգ».** Բորսայում կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների որոշում և հաշվանցում (գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքում, ճշտում և հաշվարկային փաստաթղթերի պատրաստում).
- 1.1.21. **«իրավասու հաշիվներ».** Անդամներին պատկանող դրամական հաշիվներ, որոնցից միայն կարող է իրականացվել դրամական միջոցների փոխանցումը դրամի առևտրային հաշվին, և որոնց վրա փոխանցվում են դրամական միջոցները Բորսայում կնքված գործարքների վերջնահաշվարկի իրականացման ժամանակ. Անդամը առևտրային բանկ լինելու դեպքում իրավասու հաշիվները վարվում են Անդամի կողմից, Անդամը առևտրային բանկ չլինելու դեպքում իրավասու հաշիվները վարվում է Հաշվարկային գործակալի կողմից
- 1.1.22. **«կենտրոնացված քլիրինգ».** քլիրինգի իրականացման եղանակ, որի դեպքում Օպերատորը դառնում է Անդամների կողմից կնքված գործարքների հակադարձ կողմը՝ կրելով նրանց բոլոր պարտականությունները և ձեռք բերելով նրանց բոլոր իրավունքները՝ կապված Բորսայում կնքված գործարքների հետ,
- 1.1.23. **«գուտացում».** միևնույն առևտրային նստաշրջանում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների հաշվանցման հետ կապված Անդամի և նրա հաճախորդների գուտ պարտավորությունների և/կամ պահանջների որոշման գործընթաց, որի արդյունքում յուրաքանչյուր Անդամի (նրա հաճախորդի) մոտ Օպերատորի հանդեպ առաջանում է միայն՝
1.1.23.1. մեկ գուտ դրամական պահանջ և/կամ գուտ դրամական պարտավորություն.
1.1.23.2. մեկ գուտ արժեթղթային պահանջ և/կամ գուտ արժեթղթային պարտավորություն.
- 1.1.24. **«վերջնահաշվարկ».** գործողություն, որի արդյունքում մարվում են դրամական միջոցների և արժեթղթերի փոխանցման հետ կապված Անդամների (նրանց

հաճախորդների) և Օպերատորի միջև ծագած դրամական և արժեթղթային պարտավորությունները.

- 1.1.25. «ամբողջական ապահովվածությամբ վերջնահաշվարկ».** վերջնահաշվարկի իրականացման եղանակ, որի դեպքում Անդամները իրավունք ունեն Բորսայում գործարքներ կնքել միայն արժեթղթերի և դրամական միջոցների այնպիսի քանակության սահմաններում, որոնք նրանց կողմից նախապես (մինչև Բորսայի տվյալ առևտրային նստաշրջանի սկիզբը) հաշվեգրվել են համապատասխանաբար դրամի առևտրային հաշվին և/կամ արգելադրված են համապատասխան անձնական հաշիվներում.
- 1.1.26. «Էլեկտրոնային եղանակով առաքված փաստաթուղթ».** ՄիԲիԷյՆԵթ միջբանկային համակարգչային ցանցի հիման վրա գործող Լոտուս համակարգի Էլեկտրոնային փոստով (այսուհետ՝ ՄիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով) կամ ՀՀ կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգով (այսուհետ՝ Էլեկտրոնային վճարումների համակարգով) առաքված փաստաթուղթ: ՄիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով ուղարկված փաստաթուղթը պետք է պարտադիր օժտված լինի փաստաթղթի առաքումը և ստացումը հաստատող անդորրագրերը ստանալու հնարավորությամբ, պաշտպանված լինի Էլեկտրոնային ստորագրությամբ և ծածկագրումով: Այն վավեր է և հավասարագոր է թղթային փաստաթղթին, եթե այն օժտված է ուղարկող կողմի Էլեկտրոնային ստորագրությամբ և ուղարկվել է ստացող կողմի՝ ՄիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո սերվերում գրանցված համապատասխան հասցեով (այսուհետ՝ իրավասու Էլեկտրոնային հասցե) :
- 1.1.27. արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներ** – «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, կարգավորվող շուկայի օպերատորը, արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորը և օրենքով նախատեսված այլ անձինք.
- 1.1.28. ներդրումային ծառայություններ մատուցող անձ** - ներդրումային ընկերություն, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, բանկը և վարկային կազմակերպությունը.

1.2. Սույն կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով սահմանված նշանակությունները:

2. Անդամության կարգը և անդամությունից զրկումը

- 2.1. Համակարգի անդամ (այսուհետ նաև՝ Անդամ) կարող են լինել.
- 2.1.1. արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները
 - 2.1.2. ՀՀ կենտրոնական բանկը
 - 2.1.3. օտարերկրյա հաշվարկային համակարգի օպերատորը, օտարերկրյա արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով
 - 2.1.4. ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ անձինք
- 2.2. Համակարգի անդամ դառնալու և Բորսայում արժեթղթերով առևտրին մասնակցելու և գործարքներ կնքելու համար սույն կանոնակարգի 2.1. կետով սահմանված անձինք պարտավոր են Օպերատորի հետ կնքել Համակարգի սպասարկման համապատասխան պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), ներկայացնելով համապատասխան գրանցման դիմում և դրան կից Ձև R101-ը՝ (տես Հավելված 1) երկու օրինակից:

- 2.3. Գրանցման դիմումը և դրան կից Ձև R101-ը Օպերատորին է ներկայացվում Բորսայում արժեթղթերով առևտրին մասնակցելուց և գործարքներ կնքելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:
- 2.4. Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է գրանցման դիմումի ներկայացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում կնքել Պայմանագիր կամ մերժել ներկայացված դիմումը, այդ մասին գրավոր ծանուցելով համապատասխան դիմումատուին:
- 2.5. Ներկայացված գրանցման դիմումը մերժվում է, եթե առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն:
- 2.6. Պայմանագրի կնքման դեպքում Օպերատորը Ձև R101-ի երկու օրինակներից մեկը հետ է վերադարձնում Անդամին, Պայմանագրի օրինակի հետ մեկտեղ:
- 2.7. Անդամը գրկվում է անդամությունից կամ նրա անդամությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում.
 - 2.7.1. Անդամի՝ Օրենքով նախատեսված մասնագիտական գործունեության լիցենզիայի դադարում.
 - 2.7.2. Անդամի լուծարմամբ.
 - 2.7.3. Օպերատորի դիտորդ խորհրդի որոշման հիման վրա, եթե Անդամը առնվազն երկու անգամ խախտել է սույն կանոնակարգի պահանջները և այդ մասին ծանուցվել է Օպերատորի կողմից.
 - 2.7.4. Օպերատորի դիտորդ խորհրդի որոշման հիման վրա՝ սույն կանոնակարգով այլ սահմանված դեպքերում.
 - 2.7.5. Բորսայում կորպորատիվ արժեթղթերի առևտրի Անդամի իրավունքը դադարեցվել է.
 - 2.7.6. Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պայմանագրի լուծմամբ:

3. Համակարգի անդամների իրավունքները և պարտականությունները

- 3.1. Անդամը իրավունք ունի Օպերատորին ներկայացնել միայն Օպերատորի սույն կանոնակարգով սահմանված հանձնարարականներ, հանձնարարագրեր, տվյալներ և/կամ այլ փաստաթղթեր:
- 3.2. Անդամը պարտավոր է ներկայացնել հանձնարարականներ, հանձնարարագրեր, տվյալներ և/կամ այլ փաստաթղթեր սույն կանոնակարգով սահմանված ժամկետներին համաձայն և սույն կանոնակարգով սահմանված եղանակով:
- 3.3. Սույն կանոնակարգով սահմանված Ձև R 101-ում ներառվող ցանկացած տեղեկության յուրաքանչյուր փոփոխության դեպքում Անդամը պարտավոր է ներկայացնել նոր Ձև R101, 2 օրինակից և համապատասխան դիմում, Բորսայում արժեթղթերով առևտրին մասնակցելուց և գործարքներ կնքելուց առնվազն 1 աշխատանքային օր առաջ: Անդամի կողմից սույն կետով ներկայացված դիմումը մերժվում է, եթե առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն: Դիմումի մերժման դեպքում Օպերատորը այդ մասին ծանուցում է Անդամին դիմումի ներկայացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.4. Անդամը պարտավոր է իր ինտերնետ կայքի կամ դրա բացակայության դեպքում նվազագույնը 1000 (հազար) տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության (պարբերական մամուլի) միջոցներով շահագրգիռ անձանց տեղեկացնել Համակարգում իր անդամության և Համակարգի կանոնների մասին՝ Համակարգի անդամության համապատասխան պայմանագրի կնքման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.5. Անդամը իր հաճախորդներին պարտավոր է տրամադրել տարբերակված ծածկագրեր, որոնք չեն կրկնում միմյանց:

- 3.6. Անդամները, այդ թվում պահառուները, պարտավոր են եռամսյակային կտրվածքով Օպերատորին ներկայացնել իրենց ներքին աուդիտի եզրակացությունը, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ՝ ընթացիկ գործունեության և ռիսկերի վերաբերյալ, ինչպես նաև հաշվետվություն, որը վերաբերում է գործունեության համապատասխանությանը ՀՀ օրենսդրությամբ, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, կարգավորվող շուկայի կանոններով, իր գործունեության կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- 3.7. Անդամը, այդ թվում նրանք, ովքեր ունեն պահառության՝ ոչ հիմնական ծառայության մատուցման իրավունք, սույն կանոնակարգի 3.6. կետով սահմանված փաստաթղթերը Օպերատորին են ներկայացնում նաև յուրաքանչյուր խախտման հայտնաբերման դեպքում, դրա հայտնաբերման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.8. Անդամները, որոնք ունեն նաև պահառության՝ ոչ հիմնական ծառայության մատուցման իրավունք, պարտավոր են իրենց մոտ բացված արժեթղթերի հաշիվներում հաշվառվող արժեթղթերի մնացորդների համադրման և ճշգրտման վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել Օպերատորին եռամսյակային կտրվածքով, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:
- 3.9. Անդամն իր հաճախորդներին (բացառությամբ նրանց, որոնց արժեթղթերի պահառությունը իրականացնում է տվյալ Անդամը) տրամադրում է քաղվածք ռեեստրից մինչև տվյալ հաճախորդի արժեթղթերի հետ կապված Օպերատորին սույն կանոնակարգով սահմանված հանձնարարագրերի և/կամ փաստաթղթերի՝ առաջին անգամ ներկայացումը:
- 3.10. Եթե Անդամը սույն կանոնակարգով սահմանված դեպքերում Օպերատորին ներկայացնում է փաստաթղթերի և/կամ հանձնարարագրերի, հանձնարարականների թղթային տարբերակ(ներ)ը, ապա վերջիններս ներկայացվում են դրանց էլեկտրոնային տարբերակների հետ մեկտեղ՝ էլեկտրոնային կրիչով:
- 3.11. Անդամը պետք է գործի համաձայն սույն կանոնակարգի պահանջների, Համակարգը կարգավորող, իր կողմից կնքված և գործող պայմանագրերի դրույթների և այլ նորմատիվ իրավական ակտերի:
- 3.12. Անդամի նկատմամբ անվճարունակության գործընթաց սկսվելու դեպքում Անդամը պետք է այդ մասին անհապաղ ծանուցի Օպերատորին: Ծանուցման մեջ պետք է նշվի անվճարունակության գործընթացի սկսման ամսաթիվը:
- 3.13. Այն դեպքում, երբ Անդամին տրված լիցենզիան կասեցվել կամ չեղյալ է համարվել, ապա Անդամը պետք է այդ մասին ամմիջապես գրավոր ծանուցի Օպերատորին: Ծանուցման ուշացման դեպքում Անդամը պատասխանատվություն է կրում ուշացման պատճառով առաջացած բոլոր հետևանքների համար:
- 3.14. Անդամը, որը մատուցում է պահառության ոչ հիմնական ծառայություն, իրավունք ունի իր հետ արժեթղթերի պահառության պայմանագրային հարաբերություններում գտնվող հաճախորդների արժեթղթերով գործարքները իրականացնել Բորսայում:
- 3.15. Անդամը պարտավոր է Օպերատորի կողմից տրամադրված սույն կանոնակարգի 14.2. կետով սահմանված հաշվետվության տեղեկությունները համեմատել իրեն կամ Հաշվարկային գործակալին ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով տրամադրված կամ ՀՀ կենտրոնական բանկից ստացված տեղեկությունների հետ: Անհամապատասխանությունների առկայության դեպքում Անդամը պարտավոր է այդ մասին մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16.30-ը տեղեկացնել Օպերատորին:
- 3.16. Անդամը պարտավոր է Օպերատորի կողմից տրամադրված սույն կանոնակարգի 14.1 կետով սահմանված քաղվածքը համեմատել իր մոտ առկա այլ աղբյուրներից ստացված նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Անդամը պարտավոր է այդ մասին մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16.30-ը տեղեկացնել Օպերատորին:

- 3.17. Անդամը պարտավոր է Օպերատորի կողմից Համակարգի սպասարկմամբ պայմանավորված ծառայությունների մատուցման համար կատարել վճարումներ Օպերատորի «Սակագների մասին» կանոններով սահմանված կարգով:

4. Համակարգի օպերատորի իրավունքները և պարտականությունները

- 4.1. Համակարգի օպերատորը պատասխանատու է Համակարգի անվտանգ և արդյունավետ գործունեության համար:
- 4.2. Համակարգի անդամության համապատասխան պայմանագրի կնքման դիմումի ներկայացման օրվանից երեք օրվա ընթացքում Օպերատորը Անդամին տրամադրում է նույնականացնող համար և Համակարգի սպասարկման հետ կապված հանձնարարագրերի և այլ փաստաթղթերի (անհրաժեշտության դեպքում) պաշտպանված տարբերակները, որոնք սահմանված են սույն կանոնակարգի Հավելված 2, 3,-4-ում:
- 4.3. Համակարգի օպերատորը պարզելով, որ Անդամը ճանաչվել է անվճարունակ, շարունակում է այդ Անդամի կողմից տրված հանձնարարագրերի կատարումը:
- 4.4. Օպերատորը՝ ստանալով սույն կանոնակարգի 3.6. կետով սահմանված փաստաթղթերը, ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշման հիման վրա կազմում է աշխատանքային խումբ և եզրակացություն է ներկայացնում Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարին վերոնշյալ փաստաթղթերի վերաբերյալ: Աշխատանքային խմբի կողմից սույն փաստաթղթերի վերաբերյալ 2 և ավել դիտողություններով եզրակացություն կազմելու դեպքում այն ներկայացվում է Օպերատորի դիտող խորհրդի առաջիկա նիստի քննարկմամբ: Խորհրդի նիստի ժամանակ որոշում է կայացվում Անդամի նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ՝ ընդհուպ միջև անդամությունից զրկում:
- 4.5. Օպերատորը, Օրենքով սահմանված վերահսկողության գործառույթի իրականացման շրջանակներում յուրաքանչյուր աշխատանքային օր Անդամի պաշտոնական կայքում և/կամ այլ www.arka.am, www.arminfo.am կայքերում դիտում և համեմատում է Անդամների վճարունակության ցուցանիշների համապատասխանությունը օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Օպերատորը այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է ՀՀ կենտրոնական բանկին:
- 4.6. Սույն կանոնակարգի 4.5. կետով նախատեսված տեղեկությունը ՀՀ կենտրոնական բանկին հայտնելուց հետո, ըստ վերջինիս ցուցումների, Օպերատորը կասեցնում է Անդամի գործունեությունը մինչև հայտնաբերված թերությունների վերացումը:
- 4.7. Սույն կանոնակարգի 4.6. կետում նշված թերությունները 1 ամսվա ընթացքում չվերացնելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, եթե Անդամը առնվազն 2 անգամ խախտել է սույն կանոնակարգի 4.5. կետով սահմանված վճարունակության ցուցանիշներին համապատասխանության պահանջները, Օպերատորը իրավունք ունի դիմել ՀՀ կենտրոնական բանկ Անդամին անդամությունից զրկելու հայտով: Անդամին անդամության զրկումից որոշումը ընդունում է Օպերատորի դիտող խորհրդի կողմից, ՀՀ կենտրոնական բանկի ցուցումների հիման վրա:
- 4.8. Եթե ժամանակավոր աղմինիստրացիայի գործունեության ընթացքում սառեցվում է Անդամի պարտատերերի պահանջների բավարարումը (սահմանվում է մորատորիում) կամ կասեցվում է Անդամի գործունեությունը, ապա Համակարգի օպերատորը պարտավոր է անհապաղ կասեցնել այդ անդամի կողմից տրված հանձնարարագրերի ընդունումը և այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ՀՀ կենտրոնական բանկին:

- 4.9. Անդամին դատարանի կողմից սնանկ ճանաչելու դեպքում Համակարգի օպերատորը պարտավոր է անհապաղ դադարեցնել այդ Անդամի կողմից տրված հանձնարարագրերի ընդունումը և այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ՀՀ կենտրոնական բանկին:
- 4.10. Համակարգի օպերատորը ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին Օպերատորի և Անդամի միջև կնքված Պայմանագրի լրացումների և փոփոխությունների մասին:
- 4.11. Համակարգի օպերատորը ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին Համակարգի գործունեության ավարտման մասին կայացրած որոշման վերաբերյալ: Սույն որոշումը ընդունվում է Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից:
- 4.12. ՀՀ կենտրոնական բանկի պահանջով Համակարգի օպերատորը պարտավոր է տրամադրել այլ անհրաժեշտ տեղեկություններ Համակարգի գործունեության վերաբերյալ:

5. Համակարգի գործունեության սկզբունքները, քիրիճի և վերջնահաշվարկի իրականացման եղանակը

- 5.1. Համակարգի գործունեությունը հիմնվում է անվտանգության, արդյունավետության և թափանցիկության վրա:
- 5.2. Օպերատորը Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունները որոշումը և հաշվանցումը կատարում է կենտրոնացված քիրիճի եղանակով՝ գուտացման միջոցով:
- 5.3. Օպերատորը Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը իրականացնում է արժեթղթերի և դրամական միջոցների ամբողջական ապահովվածության եղանակով՝ առաքում վճարման դիմաց սկզբունքով:
- 5.4. Օպերատորը Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը իրականացնում է T+0 ժամանակահատվածում, T-ն Բորսայում գործարքի կնքման ամսաթիվն է. իսկ 0-ն գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրերի թիվը:
- 5.5. Օպերատորի և Անդամների միջև փաստաթղթաշրջանառությունը տեղի է ունենում էլեկտրոնային եղանակով, Սի Բի Էյ Նեթ համակարգչային ցանցի միջոցով: Վճարման հանձնարարականները և դրանց կատարումը հավաստող հաստումները առաքվում են էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Թղթային եղանակով փաստաթղթաշրջանառությունը կարող է տեղի ունենալ, եթե.
 - 5.5.1. Անդամը միացված չէ էլեկտրոնային վճարումների համակարգին կամ
 - 5.5.2. Անդամը չունի իրավասու էլեկտրոնային հասցե կամ
 - 5.5.3. Սի Բի Էյ Նեթ համակարգչային ցանցը կամ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգը ժամանակավորապես խափանվել է Օպերատորի կամ ՀՀ կենտրոնական բանկի մոտ: Նման խափանումներ են հանդիսանում այն տեխնիկական խնդիրները, որոնց հետևանքով անհնար է դառնում էլեկտրոնային եղանակով սույն կանոնակարգով սահմանված հանձնարարագրերի, հանձնարարականների և այլ փաստաթղթերի ընդունումը Օպերատորի կողմից: Այս դեպքում Օպերատորը ծանուցում է խափանման մասին Համակարգի բոլոր Անդամներին, Բորսային և ՀՀ կենտրոնական բանկին և սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերի և/կամ հանձնարարագրերի և/ կամ վճարման հանձնարարականների ներկայացման վերջնաժամկետը երկարացվում է 30 րոպեով: Առևտրային նստաշրջանի սկիզբը ևս հետաձգվում է 30 րոպեով:

- 5.6. Անդամների կողմից սույն կանոնակարգով ներկայացվող փաստաթղթերի, հանձնարարականների և հանձնարարագրերի թղթային տարբերակները պետք ստորագրված և կնքված լինեն Անդամի լիազոր ներկայացուցչի կողմից:
- 5.7. Բյուրոյի և վերջնահաշվարկի իրականացման համար Անդամը Չև R 101-ում ներկայացնում է 3 իրավասու հաշիվների համարներ, մեկը՝ սեփական գործարքների համար, մյուսը՝ հաճախորդների գործարքների համար և երրորդը Անդամի՝ անվանատիրոջ հաշվով կատարվելիք գործարքների համար (եթե տվյալ Անդամը ունի պահառության ոչ հիմնական ծառայության մատուցման իրավունք):
- 5.8. Օպերատորի կողմից վճարման հանձնարարականների կազմման ժամանակ տասնորդական լումաների առկայության դեպքում դրանք կլորացվում են 10 (տաս) Հայաստանի Հանրապետության լումայի ճշտությամբ, ընդ որում զրոյից մեծ տասնավորի դեպքում տասնավորը դառնում է զրո: Սույն կետով սահմանված գործողությունների կատարման դեպքում Օպերատորի դրամի առևտրային հաշվում մնացած լումաները Օպերատորը փոխանցում է իր հաշվարկային հաշիվներից որևէ մեկին:
- 5.9. Էլեկտրոնային վճարումների համակարգով փաստաթղթերը պետք է առաքվեն Էլեկտրոնային վճարումների համակարգի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի համաձայն:
- 5.10. Սույն կանոնակարգի համաձայն՝
- 5.10.1. ՍիԲիԷյՆԵթ համակարգային ցանցով ուղարկված փաստաթղթի ստացման պահ է համարվում փաստաթղթի առաքման անդորրագրում նշված ժամանակը
 - 5.10.2. Էլեկտրոնային վճարումների համակարգով ներկայացված փաստաթղթի դեպքում՝ «ՀՀ կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգի» կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամանակը.
 - 5.10.3. թղթային եղանակով ներկայացված փաստաթղթի դեպքում՝ փաստաթուղթը ստացող կողմի լիազորված աշխատակցին փաստաթղթի հանձնման պահը :

6. Երաշխիք

- 6.1. Բորսայում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Անդամը մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը սույն կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում է.
- 6.1.1. իր կամ իր հաճախորդի անձնական հաշիվներում այն արժեթղթերի առևտրային արգելադրումը, որոնցով Անդամը նախատեսում է իր կամ իր հաճախորդի հաշվին վաճառքի գործառնություններ կատարել առևտրի ընթացքում: Անձնական հաշիվներում արգելադրված արժեթղթերը հանդիսանում են Անդամի կողմից վաճառքի պարտավորությունների կատարման ապահովման միջոց:
 - 6.1.2. իր կամ իր հաճախորդի իրավասու հաշվից դրամի առևտրային հաշվին Հայաստանի Հանրապետության դրամի այնպիսի ծավալի փոխանցում, որոնցով Անդամը նախատեսում է իր կամ իր հաճախորդի հաշվին առքի գործառնություններ կատարել առևտրի ընթացքում: Դրամի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցները հանդիսանում են Անդամի կողմից գնման գործարքների կատարման ապահովման միջոց: Դրամի առևտրային հաշվին փոխանցված (դեպոնացված) միջոցները հանդիսանում է երաշխիքային հիմնադրամի միջոց՝ ապահովվելով վերջնահաշվարկի կատարումը:
- 6.2. Ռիսկերի մվազեցման և արդյունավետ կառավարման նպատակով Օպերատորի մոտ Համակարգի սպասարկումը ապահովող համակարգային տեխնիկայի խափանման դեպքում Օպերատորը աշխատեցնում է պահեստային համակարգային տեխնիկան սույն կանոնակարգով սահմանված գործողությունների անխափան կատարման համար:

- 6.3. Համակարգի գործունեությունը ապահովող ծրագրային համակարգում ներառվող տեղեկությունները յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում արխիվացվում և պահվում են:
- 6.4. Անդամների կողմից Օպերատորին ներկայացված Չև R 101-ում ներառված իրավասու հաշիվների վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են Համակարգը ապահովող ծրագրային համակարգ երկու աշխատակցի կողմից մեկ ծածկագրի համապատասխան բաժինները մուտքագրելու միջոցով, առավելագույնս նվազեցնելով գործառնական ռիսկը:
- 6.5. Նույն գործողությունների կրկնակի կատարումը բացառվում է, քանի որ հաջողությամբ կատարված կարգադրությունները դուրս են գալիս հանձնարարականների, հանձնարարագրերի հերթից:
- 6.6. Սույն կանոնակարգով չնախատեսված արտակարգ իրավիճակներում գործողությունները կարգավորվում են համապատասխան պայմանագրերով:

7. Արժեթղթերի առևտրային արգելադրում և դրա դադարեցում

- 7.1. Արժեթղթերի առևտրային արգելադրումը կատարվում է Օպերատորի կողմից Անդամից ստացված արգելադրման հանձնարարագրի հիման վրա, բացառությամբ, եթե.
 - 7.1.1. առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն կամ
 - 7.1.2. ներկայացված հանձնարարագիրը լրացված է թերի և/կամ դրանում ներառված տեղեկությունները արժանահավատ չեն:
- 7.2. Առևտրային արգելադրման հանձնարարագիրը՝ Չև B 402 (տես Հավելված 2) պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝
 - 7.2.1. թողարկողի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը .
 - 7.2.2. արժեթղթերի արգելադրման ամսաթիվը (օր/ամիս/տարի).
 - 7.2.3. անձնական հաշվի համարը.
 - 7.2.4. գրանցված սեփականատիրոջ՝ Անդամի կողմից շնորհված տարբերակիչ ծածկագիրը (5 նիշ),
 - 7.2.5. Անդամին շնորհված ծածկագրի նախադիրը և բորսայական հապավումը
 - 7.2.6. արգելադրվող արժեթղթերի քանակը.
 - 7.2.7. Անդամի լիազորված ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը.
 - 7.2.8. Անդամի անվանումը
 - 7.2.9. Այլ
- 7.3. Անդամը առևտրային արգելադրման հանձնարարագիրը Օպերատորին է ներկայացնում ոչ ուշ քան առևտրային օրվա 10³⁰ –ը:
- 7.4. Օպերատորը Անդամից ստացված առևտրային արգելադրման մեկ հանձնարարագրում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) Օպերատորի մոտ առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է ըստ հանձնարարագրերի ստացման հաջորդականության: Համեմատության արդյունքում Օպերատորը տեղեկացնում է Անդամին համապատասխան հաղորդագրություն ուղարկելու միջոցով արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարագրում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ, եթե.
 - 7.4.1. դրանում առկա են 7.1.1. կամ 7.1.2. կետերում նշված անհամապատասխանությունները, և
 - 7.4.2. հանձնարարագիրը ներկայացվել է մինչև առևտրային օրվա ժամը 10.¹⁰-ը:
- 7.5. Համեմատության արդյունքում 7.4.2. կետով սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հանձնարարագրերում առկա անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում հանձնարարագրի կատարումը մերժվում է:

- 7.6. Սույն կանոնակարգի 7.4. կետում նշված հաղորդագրությունը ստանալու դեպքում Անդամը իրավունք ունի մինչև նույն առևտրային օրվա ժամը 10³⁰ արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարագրի ուղղված տարբերակը ներկայացնել Օպերատորին:
- 7.7. Սույն կանոնակարգի 7.6. կետով սահմանված ժամկետից ուշ ստացված առևտրային արգելադրման հանձնարարագրերի կատարումը մերժվում է:
- 7.8. Արժեթղթերի առևտրային արգելադրումը դադարեցվում է, եթե.
- 7.8.1. Անդամի կողմից ներկայացվել է առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագիր.
 - 7.8.2. Բորսայում առևտրի ընթացքում կնքված գործարքների արդյունքում արգելադրված արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է փոխանցման.
 - 7.8.3. Բորսայում առևտուր իրականացնելու Անդամի իրավունքը կասեցվել կամ դադարեցվել է.
 - 7.8.4. Արժեթղթերը մարվել են.
- 7.9. Առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրի հիման վրա արգելադրված արժեթղթերի արգելադրման դադարեցումը կատարվում է մինչև նույն առևտրային օրվա ժամը 10³⁰-ը կամ Բորսայում կնքված գործարքների վերջնահաշվարկն ավարտելուց հետո, բայց ոչ ուշ քան Օպերատորին հանձնարարագրի ներկայացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- 7.10. Բորսայում առևտուր իրականացնելու Անդամի իրավունքը կասեցվելու կամ դադարեցվելու հիմքով արժեթղթերի արգելադրման դադարեցումը կատարվում է դրա մասին Օպերատորի կողմից տեղեկանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- 7.11. Առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագիրը՝ B 403 (տես Հավելված 3) պետք է պարունակի,
- 7.11.1. թողարկողի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը .
 - 7.11.2. արժեթղթերի արգելադրման դադարեցման ամսաթիվը (օր/ամիս/տարի).
 - 7.11.3. անձնական հաշվի համարը.
 - 7.11.4. արգելադրումը դադարեցվող արժեթղթերի քանակը.
 - 7.11.5. Անդամի լիազորված ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը.
 - 7.11.6. Անդամի անվանումը
 - 7.11.7. Այլ
- 7.12. Օպերատորը Անդամից ստացված առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրում ներառված տեղեկությունները համեմատում է Օպերատորի մոտ առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Օպերատորը այդ մասին տեղեկացնում է համապատասխան Անդամին, եթե առևտրային արգելադրման հանձնարարագիրը ներկայացվել է մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10¹⁰-ը:
- 7.13. Համեմատության արդյունքում 7.12. կետում սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրերում առկա անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրի կատարումը մերժվում է:
- 7.14. Անհամապատասխանությունները մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10³⁰-ը վերացնելու և Օպերատորին ներկայացնելու անհնարինության դեպքում, Օպերատորը մերժում է առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարագրի կատարումը:

8. Դրամական միջոցների փոխանցումը

- 8.1. Բորսայում կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Անդամները անմիջապես, կամ առևտրային բանկ չլինելու դեպքում՝ իրենց

իրավասու հաշիվները վարող Հաշվարկային գործակալների միջոցով մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը իրենց իրավասու հաշիվներից Օպերատորի դրամի առևտրային հաշվին են փոխանցում (դեպոնացնում) Բորսայում արժեթղթերի առևտրի համար նախատեսված դրամական միջոցները:

- 8.2. Գրամական միջոցների փոխանցումը Օպերատորի դրամի առևտրային հաշվի վրա իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված համապատասխան հանձնարարականների հիման վրա: Հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով:
- 8.3. Էլեկտրոնային եղանակով վճարման հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային վճարումների համակարգի ՀՏ 100 կամ ՀՏ 132 հաղորդագրության միջոցով մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10¹⁰, իսկ թղթային եղանակով՝ մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10⁰⁰-ն, որոնց կատարման դեպքում կատարումը հաստատող համապատասխան ՀՏ 100, ՀՏ 132 հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով անմիջապես ուղարկվում են Օպերատորին:
- 8.4. ՀՀ կենտրոնական բանկը պետք է ապահովի հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունների ներկայացումը Օպերատորին առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 30 րոպե առաջ:
- 8.5. Եթե Օպերատորի դրամի առևտրային հաշվին դրամական միջոցներ են փոխանցվել ոչ իրավասու հաշիվներից, ապա Օպերատորը անմիջապես պատրաստում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով:
- 8.6. Եթե ՀՀ կենտրոնական բանկում անհնար է ապահովել էլեկտրոնային եղանակով ներկայացվող հանձնարարականների ընդունումը մինչև ժամը 10¹⁰ -ը, ապա ՀՀ կենտրոնական բանկը, ոչ ուշ քան առևտրային նստաշրջանի սկսվելուց 30 (երեսուն) րոպե առաջ այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով տեղեկացնում է Օպերատորին և Բորսային: Բորսան իր կանոններին համապատասխան որոշում է ընդունում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ, իսկ Օպերատորը ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով կամ հեռախոսով տեղեկացնում է այդ մասին Անդամներին: Անդամները կամ դրանց սպասարկող Հաշվարկային գործակալները, որոնց էլեկտրոնային հանձնարարականները չեն ստացվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից, կարող են ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել թղթային հանձնարարականներ՝ նշելով վերջիններիս վրա «կրկնօրինակ», ինչը կբացառի միջոցների կրկնակի փոխանցումը Օպերատորի առևտրային հաշվին:
- 8.7. Եթե Օպերատորի կողմից անհնար է հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների էլեկտրոնային եղանակով ստացումը, ապա դրանք Օպերատորը ՀՀ կենտրոնական բանկից ստանում է էլեկտրոնային կրիչով և, անհրաժեշտության դեպքում, դիմում է Բորսային՝ առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու նպատակով:
- 8.8. Եթե Բորսայում առկա տեխնիկական խնդիրների կամ այլ պատճառների հետևանքով որոշում է ընդունվում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ, ապա Բորսան այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում է Անդամներին և ՀՀ կենտրոնական բանկին:
- 8.9. Մույն կանոնակարգի 8.6, 8.7. և 8.8. կետերով սահմանված դեպքերում առևտրային նստաշրջանի սկզբի հետաձգման ժամկետով հետաձգվում է նաև սույն գլխի 8.3. և 8. 4. կետերում սահմանված՝ հանձնարարականների և հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների ներկայացման ժամկետները:
- 8.10. Անդամը դրամի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Օպերատորին ոչ ուշ քան առևտրային օրվա 10.³⁰ -ը: Գրամի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվությունը՝ M 501 (տես Հավելված 4) պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.
 - 8.10.1. Անդամի սեփական գործարքների համար նախատեսված դրամական միջոցների վերաբերյալ՝
 - 8.10.1.1. Անդամի առևտրի ծածկագիրը (7 նիշ).

- 8.10.1.2. Անդամի անձնական հաշվի համարը
- 8.10.1.3. դրամական միջոցների գումարը.
- 8.10.2. Անդամի հաճախորդի գործարքների համար նախատեսված դրամական միջոցների վերաբերյալ`
 - 8.10.2.1. գրանցված սեփականատիրոջ` Անդամի կողմից շնորհված տարբերակիչ ծածկագիրը (5 նիշ).
 - 8.10.2.2. Անդամի հաճախորդի անձնական հաշվի համարը.
 - 8.10.2.3. դրամական միջոցների գումարը.
- 8.10.3. Անդամի` անվանատիրոջ գործարքների համար նախատեսված դրամական միջոցների վերաբերյալ`
 - 8.10.3.1. Անդամի` անվանատիրոջ անձնական հաշվի համարը
 - 8.10.3.2. Անդամի անվանատիրոջ տարբերակիչ ծածկագիրը (5 նիշ)
 - 8.10.3.3. դրամական միջոցների գումարը.
- 8.10.4. նշում դրամի առևտրային հաշվին փոխանցվելիք դրամական միջոցների վերաբերյալ առ այն, թե որ առևտրային նստաշրջանի համար են դրանք նախատեսվում.
- 8.10.5. Անդամի լիազորված ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը
- 8.10.6. Անդամի անվանումը
- 8.10.7. Այլ
- 8.11. Օպերատորը Անդամից ստացված հաշվետվությունում` M 501-ում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) Օպերատորի մոտ առկա, ՀՀ կենտրոնական բանկից ստացված նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է ըստ հաշվետվությունների ստացման հաջորդականության: Համեմատության արդյունքում Օպերատորը տեղեկացնում է Անդամին համապատասխան հաղորդագրություն ուղարկելու միջոցով ներկայացված հաշվետվությունում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ, եթե հաշվետվությունը ներկայացվել է մինչև առևտրային օրվա ժամը 10.¹⁰ -ը և.
 - 8.11.1. առկա է սույն կանոնակարգով սահմանված որևէ պահանջի անհամապատասխանություն կամ
 - 8.11.2. ներկայացված հաշվետվությունը լրացված է թերի և/կամ դրանում ներառված տեղեկությունները արժանահավատ չեն:
- 8.12. Սույն կանոնակարգի 8.11. կետում նշված հաղորդագրությունը ստանալու դեպքում Անդամը իրավունք ունի մինչև նույն առևտրային օրվա ժամը 10³⁰ –ը Ձև M 501 հաշվետվության ուղղված տարբերակը ներկայացնել Օպերատորին:
- 8.13. Համեմատության արդյունքում 8.12. կետով սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հաշվետվությունում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում Օպերատորը մերժում է Ձև M 501-ում ներառված տեղեկությունների ընդունումը Համակարգ: Մերժման դեպքում Օպերատորը անմիջապես պատրաստում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային հանձնարարականներ` տվյալ Անդամի իրավասու հաշիվներից ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով :

9. **Քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման փուլերը**

- 9.1. Օպերատորի կողմից քլիրինգի և վերջնահաշվարկի գործառույթը իրականացվում է հետևյալ փուլերով`
 - 9.1.1.տեղեկությունների տրամադրում Բորսային.

- 9.1.2. առևտրային նստաշրջանի ավարտից հետո կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունների ստացում Բորսայից.
- 9.1.3. առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքներից բխող պարտավորությունների և պահանջների քլիրինգ.
- 9.1.4. միջոցների համեմատում.
- 9.1.5. առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկ.
- 9.1.6. Անդամներին ռեեստրից քաղվածքների տրամադրում.
- 9.1.7. Անդամներին առաքված և ստացված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրում:

10. Տեղեկությունների տրամադրում Բորսային

10.1. Օպերատորը առևտրային նստաշրջանի սկզբից առնվազն 15 րոպե առաջ տեղեկություն է տրամադրում Բորսային, որով տեղեկացնում է՝ Անդամների կողմից տվյալ առևտրային նստաշրջանում առևտուր իրականացնելու նպատակով դրամի առևտրային հաշվին փոխանցված միջոցների և առևտրային արգելադրման ենթարկված արժեթղթերի մասին:

10.2. Տեղեկությունները, դրանց տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Օպերատորի և Բորսայի միջև կնքված «Հայաստանի ֆոնդային բորսայում կորպորատիվ արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ» պայմանագրով:

11. Բորսայից տեղեկությունների ստացում

11.1. Բորսան առևտրային նստաշրջանի ավարտից ոչ ուշ քան 10 րոպե հետո տեղեկություններ է տրամադրում Օպերատորին, որով տեղեկացնում է տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների առարկա արժեթղթերի քանակի և գնի մասին, դասակարգված ըստ գործարքների և Անդամների և նրանց հաճախորդների պատկանելիության:

11.2. Տեղեկությունները, դրանց դասակարգվածությունը, տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Օպերատորի և Բորսայի միջև կնքված «Հայաստանի ֆոնդային բորսայում կորպորատիվ արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ» պայմանագրով:

11.3. Տեղեկությունները հիմք են հանդիսանում Օպերատորի համար Անդամների և նրանց հաճախորդների արժեթղթերի և դրամական միջոցների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համար:

12. Քլիրինգ

12.1. Բորսայից ստացված առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա Օպերատորը իրականացնում է նախնական ստուգում:

12.2. Եթե նախնական ստուգման արդյունքում բացահայտվում է անճշտություն, Օպերատորը Բորսայի հետ համատեղ անհապաղ իրականացնում է համապատասխան ուսումնասիրություն և դրա արդյունքներից կախված կամ ինքնուրույն է ճշտումներ կատարում, կամ էլ դրանք վերադարձնում է Բորսային դրանց ճշտման համար:

12.3. Նախնական ստուգումից, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում գործարքների տվյալների ճշգրտումից հետո Օպերատորը իրականացնում է առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների գուտացում, որի արդյունքում ըստ յուրաքանչյուր Անդամի և նրա հաճախորդի Օպերատորը որոշում է իր հանդեպ.

12.3.1. մեկ գուտ դրամական պահանջը և/կամ գուտ դրամական պարտավորությունը.

12.3.2. մեկ գուտ արժեթղթերով պահանջը և/կամ գուտ արժեթղթային պարտավորությունը:

12.4. Դրամական միջոցներով գուտ պարտավորությունը ցույց է տալիս, թե Անդամը կամ նրա հաճախորդը դրամական միջոցների ինչ գումար պետք է փոխանցի դրամի առևտրային հաշվին (դրամի կարճ դիրք), իսկ դրամական միջոցներով գուտ պահանջը՝ թե Անդամը կամ նրա հաճախորդը դրամական միջոցների ինչ գումար պետք է ստանա Օպերատորից (դրամի երկար դիրք):

12.5. Արժեթղթերով գուտ պարտավորությունները ցույց են տալիս, թե Անդամը կամ նրա հաճախորդը ինչ քանակի արժեթղթեր պետք է փոխանցի Օպերատորի տեխնիկական հաշվին (արժեթղթերի կարճ դիրք): Արժեթղթերով գուտ պահանջը ցույց է տալիս, թե Անդամը կամ նրա հաճախորդը ինչ քանակի արժեթղթեր պետք է ստանա Օպերատորից (արժեթղթերի երկար դիրք):

13. Վերջնահաշվարկ

13.1. Դրամական միջոցների և արժեթղթերի համեմատումից անհամապատասխանության բացահայտման դեպքում Օպերատորը պարտավոր է մինչև վերջնահաշվարկի կատարումը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անհամապատասխանության պատճառները հայտնաբերելու և վերացնելու ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում այդ գործընթացին ներգրավելով նաև Բորսային:

13.2. Յուրաքանչյուր Անդամի և/կամ նրա հաճախորդի արժեթղթերով գուտ պահանջը և/կամ պարտավորությունները որոշելուց հետո Օպերատորը դադարեցնում է արժեթղթերի կարճ դիրք ունեցող Անդամների և նրանց հաճախորդների անձնական հաշիվներում արգելադրված և փոխանցման ենթակա արժեթղթերի արգելադրումը՝ միաժամանակ դրանք փոխանցելով տեխնիկական հաշվի վրա:

13.3. Սույն կանոնակարգի 12.3.1 ենթակետում նշված տվյալների հիման վրա Օպերատորը հաշվարկում է Անդամների սեփական և ամփոփ հաճախորդների դրամի իրավասու հաշիվներին վերջնահաշվարկի ժամանակ փոխանցման ենթակա դրամական միջոցները, իրականացնում է կատարված հաշվարկների ստուգում և հայտնաբերված անհամապատասխանությունների վերացում և դրամական վերջնահաշվարկների իրականացման համար համապատասխան հանձնարարականների պատրաստում:

13.4. Օպերատորը մինչև տվյալ օրվա ժամը 15.30-ն չհասնող և կենտրոնական բանկ է ներկայացնում վճարման հանձնարարականները իր տարածքում գտնվող տերմինալից «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» ՀՏ 100 կամ ՀՏ 131 հաղորդագրության միջոցով: Օպերատորը միաժամանակ իրականացնում է տեխնիկական հաշվից արժեթղթերի փոխանցումը արժեթղթերի երկար դիրք ունեցող Անդամների և/կամ նրանց հաճախորդների անձնական հաշիվների վրա:

- 13.5. ՀՀ կենտրոնական բանկում սույն կանոնակարգի 13.4. կետում նշված հանձնարարականներն ավտոմատ եղանակով կատարվում են, որի արդյունքում իրականացվում են դրանցում նշված միջոցների փոխանցումները ՀՀ կենտրոնական բանկում վարվող՝ Անդամների իրավասու հաշիվներին՝ միաժամանակ վերջիններիս փոխանցելով հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները: Հաշվարկային գործակալի մոտ վարվող իրավասու հաշիվներին կատարվելիք փոխանցումների դեպքում ՀՀ կենտրոնական բանկն ապահովում է հանձնարարականում նշված միջոցների փոխանցումը Հաշվարկային գործակալի՝ ՀՀ կենտրոնական բանկում վարվող թղթակցային դրամային հաշիվներին՝ միաժամանակ Հաշվարկային գործակալին փոխանցելով հանձնարարականի կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունը: Հաշվարկային գործակալները ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատումների հիման վրա ապահովում են միջոցների մուտքագրումն իրենց մոտ վարվող՝ Անդամների իրավասու հաշիվներին: Միջոցների մուտքագրման ժամկետները և Անդամներին տեղեկացման կարգը սահմանվում են Հաշվարկային գործակալի և Անդամի միջև կնքված պայմանագրով: ՀՀ կենտրոնական բանկը հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով առաքման անհնարիմության դեպքում կամ «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգին» չմիացած և իր մոտ իրավասու հաշիվներ ունեցող Անդամներին սույն կետում նշված՝ հանձնարարականների կատարումը հաստատող փաստաթուղթը (տեղեկանք հաշվից) տրամադրում է թղթային եղանակով(անհրաժեշտության դեպքում նաև էլեկտրոնային կրիչով) մինչև ժամը 16:00-ը:
- 13.6. ՀՀ կենտրոնական բանկում իրավասու հաշիվներ ունեցող Անդամներն ստուգում են վերջնահաշվարկի արդյունքում իրենց իրավասու հաշիվների վրա փոխանցված դրամական միջոցների համապատասխանությունը Բորսայից ստացված գործարքների գրանցման վկայականների և Օպերատորից ստացած հաշվետվության (Ձև M502) տվյալների հետ: Հաշվարկային գործակալի մոտ իրավասու հաշիվներ ունեցող Անդամները Հաշվարկային գործակալի հետ ճշտում են վերջնահաշվարկի արդյունքում իրենց իրավասու հաշիվների վրա փոխանցված (փոխանցվելիք, հաշվեգրման ենթակա) դրամական միջոցների համապատասխանությունը Բորսայից ստացված գործարքների գրանցման վկայականների և Օպերատորից ստացած հաշվետվության (Ձև M502) տվյալների հետ:
- 13.7. Որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Անդամը մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16:30-ը այդ մասին հեռախոսով հայտնում է համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում է անհամապատասխանությունը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ, ՀՀ կենտրոնական բանկին և Օպերատորին: Հնարավորության դեպքում ՀՀ կենտրոնական բանկին տեղեկացումն ուղարկվում է նաև էլեկտրոնային եղանակով՝ ՍԻԲԻԷՆԵՑ համակարգչային ցանցով:
- 13.8. Եթե Օպերատորի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ Անդամի կողմից անհամապատասխանության վերաբերյալ արված ահազանգն անհիմն է, ապա Օպերատորը մինչև ժամը 17:00-ը այդ մասին հեռախոսով և ՍԻԲԻԷՆԵՑ համակարգչային ցանցով տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկին և համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում էր ահազանգը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ:
- 13.9. Եթե Օպերատորի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ անհամապատասխանությունների վերաբերյալ ահազանգը հիմնավոր է կամ առկա է կասկած, որ այն կարող է լինել հիմնավոր, ապա Օպերատորը մինչև ժամը 17:00-ը հեռախոսով և ՍԻԲԻԷՆԵՑ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով այդ մասին տեղեկացնում է համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում է (կարող է վերաբերվել) անհամապատասխանությունը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ: Միաժամանակ Օպերատորը այդ մասին տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկին՝ խնդրելով հետաձգել ՀՀ կենտրոնական բանկի գործառնական օրվա փակումը :
- 13.10. Անդամները, որոնց իրավասու հաշիվները վարվում են ՀՀ կենտրոնական բանկում և որոնց վերջնահաշվարկի ընթացքում սխալմամբ ավել դրամային միջոցներ են

փոխանցվել, պարտավոր են Օպերատորից սխալներն ուղղելու վերաբերյալ համապատասխան տեղեկացումը հեռախոսով և ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ստանալուց հետո ոչ ուշ քան մինչև ժամը 18 :00 Օպերատորի դրամի առևտրային հաշվին հետ փոխանցել ավել ստացված միջոցները: Անդամները, որոնց իրավասու հաշիվները վարվում են Հաշվարկային գործակալի մոտ և որոնց վերջնահաշվարկի ընթացքում սխալմամբ ավել դրամային միջոցներ են փոխանցվել, պարտավոր են Օպերատորից սխալներն ուղղելու վերաբերյալ համապատասխան տեղեկացումը հեռախոսով և ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ստանալուց հետո անմիջապես կարգադրել իրենց սպասարկող Հաշվարկային գործակալին ոչ ուշ քան մինչև ժամը 18 :00 Օպերատորի դրամի առևտրային հաշվին հետ փոխանցելու ավել ստացված միջոցները:

- 13.11. Օպերատորը ոչ ուշ, քան տվյալ առևտրային օրվա ժամը 18:30-ը, պարտավոր է համապատասխան հանձնարարականներ ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ՝ սույն կանոնակարգի 13.10 կետին համապատասխան ստացված միջոցներն Անդամների իրավասու հաշիվներին փոխանցելու նպատակով, որոնց սխալմամբ քիչ միջոցներ էին փոխանցվել:
- 13.12. Սույն կանոնակարգի 13.10. և 13.11. կետերին համապատասխան Անդամների, Հաշվարկային գործակալների և Օպերատորի կողմից համապատասխան հանձնարարականները ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային եղանակով:
- 13.13. Եթե ՀՀ կենտրոնական բանկը տվյալ առևտրային օրվա մինչև ժամը 17:00-ը Օպերատորի կողմից չի նախագուշացվում իր գործառնական օրվա փակումը հետաձգելու վերաբերյալ, ապա ՀՀ կենտրոնական բանկը զրոյացնում է իր մոտ վարվող՝ Անդամների այն իրավասու հաշիվները, որոնք պարտադիր կարգով ենթակա են զրոյացման, և սահմանված ժամին իրականացնում է իր գործառնական օրվա փակումը:
- 13.14 Սույն կանոնակարգի 13.3. կետին համապատասխան Օպերատորի տարածքում գտնվող տերմինալից էլեկտրոնային եղանակով հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում Օպերատորը հեռախոսով և ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով դիմում է ՀՀ կենտրոնական բանկին՝ խնդրելով հետաձգել ՀՀ կենտրոնական բանկի գործառնական օրվա փակումը: Միաժամանակ մինչև ժամը 16:00-ն էլեկտրոնային եղանակով հանձնարարականները Օպերատորի կողմից ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկում Օպերատորին հատկացված պահուստային տերմինալից՝ այդ մասին ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Անդամներին և նշելով պատճառը:
- 13.15. Պահուստային տերմինալից էլեկտրոնային եղանակով հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում դրանք մինչև ժամը 16:30-ը Օպերատորի կողմից ներկայացվում են թղթային եղանակով՝ այդ մասին ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Անդամներին և ՀՀ կենտրոնական բանկին և նշելով պատճառը:
- 13.16. Սույն կանոնակարգի 13.14. կետով սահմանված դեպքում սույն կանոնակարգի 13.5, 13.7, 13.8, 13.9, 13.10 և 13.11. կետերում սահմանված ժամկետները երկարաձգվում են 30 րոպեով:
- 13.17. Սույն կանոնակարգի 13.15. կետով սահմանված դեպքում սույն կանոնակարգի 13.5, 13.7, 13.8, 13.9, 13.10 և 13.11. կետերում սահմանված ժամկետները երկարաձգվում են 1 ժամով:

14. Անդամներին ռեեստրից քաղվածքների և առաքված և ստացված դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրում

- 14.1. Առևտրային նստաշրջանի ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում Օպերատորը տվյալ առևտրային նստաշրջանին մասնակցած Անդամին տրամադրում է ռեեստրից քաղվածք:
- 14.2. Առևտրային նստաշրջանի ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում Օպերատորը տվյալ առևտրային նստաշրջանին մասնակցած Անդամին տրամադրում է հաշվետվություն նրա կողմից ստացված և/կամ վճարված դրամական միջոցների վերաբերյալ՝ Չև M 502:
- 14.3. Բորսայում կնքված գործարքների արդյունքում առևտրի մասնակցի դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվությունը՝ Չև M 502, որը սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 5-ում, ներառում է հետևյալ տեղեկությունները.
 - 14.3.1. Անդամի անվանումը,
 - 14.3.2. հաշվետու ժամանակաշրջանը,
 - 14.3.3. դրամական միջոցների պատկանելիությունը (հաճախորդների, անվանատիրոջ կամ սեփական),
 - 14.3.4. Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը և իրավասու հաշվի համարը,
 - 14.3.5. գումարը առևտրային նստաշրջանի սկզբում,
 - 14.3.6. մնացորդը առևտրային նստաշրջանի վերջում,
 - 14.3.7. վճարման կամ ստացման ենթակա գումարը,
 - 14.3.8. հաշվետվության վավերացման ամսաթիվը (թղթային տարբերակը ներկայացնելու դեպքում),
 - 14.3.9. Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությունը և կնիքը (թղթային տարբերակը տրամադրելու դեպքում):

15. Պատասխանատվությունը

- 15.1. Օպերատորը ՀՀ օրենսդրությամբ, իր կանոնակարգերով, իր և Անդամների, միջև կնքված և գործող պայմանագրերով սահմանված դեպքերում, կարգով և չափով պատասխանատվություն է կրում Համակարգի սպասարկման հետ կապված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- 15.2. Եթե Անդամը սույն կանոնակարգի 13.10. կետում նշված ժամկետում չի ապահովում ավել փոխանցված դրամական միջոցների փոխանցումը Օպերատորի դրամի առևտրային հաշվին, ապա նա կրում է պատասխանատվություն իր պարտավորության չկատարման հետևանքով առաջացած բոլոր վնասների փոխհատուցման համար:

16. Անցումային դրույթներ

- 16.1. Սույն կանոնակարգը հաստատվում է Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման պահից:
- 16.2. «Նախնական դեպոնացմամբ գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնակարգ»-ով (գրանցված բոլոր փոփոխություններով և լրացումներով) սահմանված և գործող առևտրի մասնակիցները դիտվում են որպես սույն կանոնակարգով սահմանված Համակարգի անդամ և գործում են սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան: Սակայն վերջիններս պարտավոր են Օպերատորի կողմից ծանուցվելու պահից 20 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել սույն կանոնակարգի 2. կետով սահմանված գործողությունների կատարումը Համակարգի անդամ դառնալու համար :

Հաստատված է՝
 «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա » ԲԲԸ
 Դիտորդ խորհրդի 13.06.2008թ.

Քիվ 3 որոշմամբ

Յոհան Ֆրեդիկս

ք. Երևան

R 101 /Անդամի գրանցվելու հայտ

Հավելված 1

Լրացվում է Անդամի կողմից

Անդամի անվանումը	
Անդամի հասցեն	
Անդամի հեռախոսը, ֆաքսը	
Անդամի իրավասու էլեկտրոնային հասցեն	
Օպերատորի մոտ Անդամի անձնական հաշվի համարը	
Օպերատորի մոտ Անդամի՝ անվանատիրոջ անձնական հաշվի համար (առկայության դեպքում)	
Անդամի կողմից բորսայում առևտրին մասնակցելու համար լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն, պաշտոնը և ստորագրությունը	

Իրավասու հաշիվներ

Հաշվարկային գործակալի/Անդամի ¹ անվանումը և վերջինիս մոտ Անդամի սեփական դրամական միջոցների հաշվի համարը	
Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը և վերջինիս մոտ Անդամի կողմից հաճախորդների դրամական միջոցների համար բացված հաշվի համարը	
Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը և վերջինիս մոտ Անդամի՝ անվանատիրոջ դրամական միջոցների համար բացված հաշվի համարը (եթե այն տարբեր է հաճախորդների դրամական միջոցների համար բացված հաշվի համարից)	

Լրացման ամսաթիվը « _____ » _____ 200 թ.

Անդամի գործադիր մարմնի ղեկավարի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Կ.Տ.

Լրացվում է Օպերատորի կողմից

Առևտրային ծածկագրի նախադիր՝ 2 նիշից (շնորհվում է Օպերատորի կողմից)							
Անդամի բորսայական հապավում՝ 5 նիշից (շնորհվում է Բորսայի կողմից)							
Առևտրային ծածկագիր, Անդամի սեփական գործարքների կատարման համար (7նիշ = նախադիր + բորսայական հապավում)							

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի ԱՀԱ-ն

ստորագրությունը

Կ.Տ.

Հավելված 2

Ձև B 402 / Առևտրային արգելադրման հանձնարարագիր

¹ Եթե Անդամը հանդիսանում է առևտրային բանկ, ապա նշվում է Անդամի անվանումը

Անդամի անվանումը

Արժեթղթերի արգելադրման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Անդամի բորսայական հապավումը	
Անդամի ծածկագրի նախդիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Անձնական հաշվի համարը	Ծածկագիրը (5 նիշ)	Արժեթղթերի քանակը	Թողարկողի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը

Անդամի լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Կ.Տ.

Օպերատորի նշումները
(փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում)

- Ընդունման ամսաթիվը
- Գրանցման ամսաթիվը
- Կատարված է Մերժված է
- Կատարման ամսաթիվը

- Ստորագրությունը
- Ստորագրությունը
- Պատճառը՝
- Գործողություններ՝
- Ստորագրությունը

Հավելված 3

Անդամի անվանումը

Արժեթղթերի արգելադրման դադարեցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Անդամի բորսայական հապավումը	
Անդամի ծածկագրի նախդիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Անձնական հաշվի համարը	Արժեթղթերի քանակը	Թողարկողի արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը

Անդամի լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Օպերատորի նշումները
(փաստաթուղթային տարբերակի մեղակայացման դեպքում)

Ընդունման ամսաթիվը
 Գրանցման ամսաթիվը
 Կատարված է Մերժված է
 Կատարման ամսաթիվը

Կ.Տ.
 Ստորագրությունը
 Ստորագրությունը
 Պատճառը՝
 Գործողություններ՝
 Ստորագրությունը

Ձև M 501 / Արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամի կողմից ներկայացվող հաշվետվություն այն դրամական միջոցների բաշխման մասին, որոնք փոխանցվել են դրամի առևտրային հաշվին

Անդամի անվանումը

Դրամական միջոցների բաշխումը առ՝ (օր/ամիս/տարի)	
Անդամի բորսայական հապավումը	
Անդամի ծածկագրի նախդիրը	
Մուտքային փաստաթղթի համարը	

Անձնական հաշվի համարը	Ծածկագիրը (5 նիշ)	Դրամական միջոցների գումարը
	0	
Ընդամենը Անդամի սեփական գործարքների համար		0.00
Ընդամենը Անվանատիրոջ գործարքների համար		0.00
Ընդամենը հաճախորդների գործարքների համար		0.00
Ընդամենը բոլոր գործարքների համար		0.00

Անդամի լիազորված ներկայացուցչի ԱՀԱ-ն և պաշտոնը

ստորագրությունը

Կ.Տ.

Օպերատորի նշումները
(փաստաթղթային տարբերակի ներկայացման դեպքում)

Ընդունման ամսաթիվը

Ստորագրությունը

Գրանցման ամսաթիվը

Ստորագրությունը

Կատարված է

Սերժված է

Պատճառը՝

Գործողություններ՝

Կատարման ամսաթիվը

Ստորագրությունը

Ձև M 502 / ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բորսայում կնքված գործարքների արդյունքում առևտրի մասնակցի դրամական միջոցների վերաբերյալ

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ

Հաշվետու ժամանակաշրջան « », 20.. թ.

(Անդամի անվանումը)

Գրամական միջոցների պատկանելիությունը	Հաշվարկային գործակալի/Անդամի անվանումը	Իրավասու հաշվի համարը	Գումարը առևտրային նստաշրջանի սկզբում	Մնացորդը առևտրային նստաշրջանի վերջում	Վճարման (-) կամ ստացման (+) ենթակա գումարը

Գործադիր մարմնի ղեկավար / _____ /
(Ա.Հ.Ա.) (ստորագրություն)

Կ.Տ. / /
(օր/ամիս/տարի)